ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2591-Ա « 20 » մայիսի 2026թ.

ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մխիթար Կիրակոսյանի դիմումը՝ Նորագավիթ թաղամասում գտնվող 5691.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 7-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/11696/05/21 վճիռը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2026 թվականի ապրիլի 2-ի որոշումը՝ Նորագավիթ թաղամասում գտնվող 5691.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Մխիթար Կիրակոսյանին սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 7-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/11696/05/21 վճռով՝ Երևանի քաղաքապետարանին պարտավորեցվել է Նորագավիթ թաղամասում գտնվող 5691.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Մխիթար Կիրակոսյանին տրամադրել սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի հ.1517-Ն որոշման համաձայն՝ նշված հողամասի ծածկագիրն է՝ 01-011-0431-0001: Ծածկագիրը ներառված է Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 6-ի հ.15-Ն որոշման մեջ /տող՝ 7/:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Նորագավիթ թաղամասում գտնվող 5691.0քմ մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի խառը կառուցապատման գոտում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասը գտնվում է 12-րդ գոտում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 7-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/11696/05/21 վճիռը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.05.2026թ. հ.Դ-38994-26 եզրակացությունը.

1.Նորագավիթ թաղամասում գտնվող 5691.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Մխիթար Կիրակոսյանին տրամադրել հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք:

2. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, ճարտարապետության և քաղաքաշինության ու անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246